

ստան ըլլալուն, որ Առվակս կըսէ ա-  
նոր համար, թէ արևելքի կողմն է :  
Հայտնի բան է թէ արևելքան կողմ  
ըսելով կիմանայ՝ կամ իր կեցած տե-  
ղին համեմատութեամբ, որ էր Արա-  
քիոյ անապատը, կամ հրէաստանը  
ուր պիտի երթային հրեայք . որն ալ  
ըլլայ՝ հայաստան անոր արևելքը կիյ-  
նայ : Ինկէ զատ, հայաստան վերի  
կիսագնտին մէջտեղուանքը ըլլալով,  
գետերով՝ լեռներով՝ ծովերով՝ պա-  
տած, շատ յարմար էր աշխարհիս  
առջի գաւառը ըլլալու, և իր սքան-  
չելի կիմայէն զատ՝ բոլոր երկրիս ա-  
ղէկ հանգամանքներն ունի . ունի  
դաշտեր, լեռներ, ծովեր, գետեր, լճեր,  
հանքեր, և այն, ամէնն ալ միջակ  
չափով . և ինչուան հրաբուխ ալ ու-  
նեցած կերենայ, ինչպէս որ ըսուած  
է : Իսյայ մենք մէյմը աչուրնիս դար-  
ձընենք Աստիս լեռանը վրայ, ինչ  
կըտեսնենք անոր ուսը . միթէ երկրորդ  
դրախտը չէ Արյայ տապանը . արդեօք  
ինչու համար ատ նաւը . աշխարհիս  
վրայ ծփալէն ետեւ, երկրիսվը իջնալու  
ատենը Աստիսին ծայրը հանգչեցաւ :  
Կատ բնական էր, որ Արյա տապանէն  
ելածին պէս նորէն իր հայրենի եր-  
կիրը, նորէն դրախտին մօտ տեղուան-  
քը իջնայ, ու եղած փոփոխութիւնը  
տեսնելով՝ զարմանայ թէ ինչ էր ա-  
ռաջ և ինչ է հիմա . քիչ ատենէն ալ  
նորէն գետինը ծաղկելով՝ առջի վայել-  
չութեան մէկ մասը տեսնէ :

Ուր է արդեօք հիմա աս դրախտը .  
հայաստանին որ անկիւնը, որ գա-  
ւառն է : Իփրակնեան լերանց կամ  
Պինկէօլ լեռներուն վրայնայողը շատ  
շտարակուսիր անոնց քովերը գնելու  
ան փափկութեան տեղը, ինչպէս որ  
օտարազգի Ճամբորդներ ալ կը-  
վկայեն՝ տեսնելով ան երկրին մէջի  
բիւրաւոր աղքիւրները, գոյնզգոյն  
ծաղկըները, պարարտ բոյսերը և ամե-  
նայն գեղեցկութեամբ զարդարուած  
բլուրները :

1 Տես պատրիս 227 երես :

Ի՞ս նիւթիս վրայ տեղնիտեղը խօ-  
սուած է Հայաստանի հնախօսութենք  
մէջ . բայց մենք մեր ազգին գրաբառ  
չհասկցողներուն համար աս համա-  
ռօտ տեղեկութիւնը հոս տալով՝ յու-  
սանք որ աւելի համարում մըն ալ ա-  
ւելցընենք ազգայնոց սրտին մէջ իրենց  
հայրենի երկրին վրայ :

### ԲԱՐՈՑԱԿԱՆ

#### Ինքնէրցասիրութեան :

ԱՌԵ ազգին այլեայլգովելի կամ  
պարսաւելի յատկութիւններուն մէ-  
կը սեպուած է ընդհանրապէս աս  
բանս, թէ օտար ազգաց բնութեանն  
ու սովորութեանը խիստ դիւրաւ կը-  
հետեւի : Գովելի կամ պարսաւելի  
կըսեմ, վասն զի աս յատկութենէն  
կընան առաջ գալ՝ թէ մեծամեծ  
օգուտներ, և թէ մեծամեծ վնաս  
ներ : Իսյայ մենք ան կարծիքին ըս-  
տուգութեանը կամ անստուգութենք  
վրայ, նմանապէս աս յատկութեան  
պատճառին և օգուտներուն կամ  
վնասներուն վրայ ուրիշ անգամ եր-  
կայն բարակ խօսիլը հարկ սեպելով,  
հոս կըհամարինք թէ մեր ազգը ի-  
րացընէ ունի աս ուրիշներուն հե-  
տեւելու յատկութիւնը . ուստի կու-  
զենք յորդորելորնոյն յատկութիւնը  
մասնաւոր ջանքով բանեցընէ հիմա  
եւրոպացւոց մէկհատիկ գովելի և  
փափաքելի բնաւորութեանը հետեւե-  
լու, որ է ընթերցասիրութիւն և ու-  
սումնասիրութիւն, յա գիրք կարդա-  
լու և խելք սորվելու մասնաւոր ջանք  
ու փափաք : Արանց ասոր՝ եւրոպա-  
ցւոց սովորութիւններուն հետեւիլը  
այնչափ անօգուտ, մանաւանդ թէ  
այնչափ վնասակար կըսեպեմ ասիա-  
ցւոց, և մասնաւորապէս մեր ազգին,  
որ կըհամարձակիմ ըսել թէ անով  
մեր ազգը կընայ նմանցուիլ այնպիսի  
Ճամբորդի մը որ գիշեր ատեն իր ըլ-  
դիտցած երկրին մէջ հեռուէն մեծա-

մեծ հանդէսներու , նուագարաններու , ուրախութիւններու ձայն լսէ , ու կարծելով թէ առանց առաջնորդի , առանց քալած տեղը տեսներու անոնց քովը կրնայ երթալ , մէկ փոսէն մէկալը իյնայ . ունեցածը կորսունցընէ , և ուզածը չգտնէ : Իսկ թէ որ ընթերցասիրութեան և ուսումնասիրութեան ձրագը վառ ըլլայ ձեռքը , տարակոյս չկայ թէ ապահով և հանգիստ կերպով ամէն ուզածին ալ կը հասնի :

Փորձով կըտեսնենք որ Խւրոպայի մէջ քանի որ ընթերցասիրութիւնը աւելցաւ , քանի որ տպագրութեան գիւտը հնարուեցաւ ու ծաղկեցաւ , որչափ առաջ գնացին եւրոպացիք ամէն կողմանէ . աս ալ յայտնի է թէ որ ազգերն որ աւելի ընթերցասէր են՝ աւելի ալ ծաղկած են՝ թէ քաղաքականութեամբ , թէ գիտութեամբ . և թէ ճարտարութեամբ . նոյնպէս որ ազգերն որ ուրիշներէն աւելի ծաղկած են աս բաներուս մէջ , ուրիշներէն աւելի ալ ընթերցասէր և ուսումնասէր են : (Օրինակ ըլլան Խւրոպայի գլխաւոր ազգերը :

Պազդիան ու Խնդղիան որչափ ալ հեռու ըլլան իրարմէ , տպագրութեան ուժովը անանկ մօտեցած են որ Լ օնտրային մէջի իսօսակցութիւնները , գործողութիւնները , գիտուածները , կարծիքները երկու օրէն Փարիզու մէջ կըկարդացուին , Փարիզիններն ալ Լ օնտրայի մէջ : Պահուած մը կըպատահի , կամ նոր գիտելիք մը՝ նոր գիւտ մը կելէ Պազդիակամ Խնդղիա , վրան տասը օր շանցնիր՝ կըտեսնես որ 70 կամ 80 միլիոն մարդ կարդացեր է ան բանը գաղղիարէն կամ անգիտարէն . ամսէ մը ետե ալ գրեթէ բոլոր Խւրոպա կիմանայ ու կըկարդայ գերմաններէն , իտալերէն , ռուսերէն , սպանեօլերէն և այլն : Խնդհանուր հաշուով կըհամարուի թէ Խնդղիայի մէջ տարին եօթը հարիւրնոր գիրք կըտպուի , Պերմանիային մէջ հինգհարիւր , Պազ-

դիայի մէջ չորս հարիւր . շատ գըրքերէն ալ ինչուան 30 կամ 40 հազար օրինակ . ըսել է թէ կարդացողներն ալ ըստ այնմ շատուոր են : Խւրոպացւոց ընթերցասիրութեանը մէկ նշանն ալ աս է , որ երեւելի հեղինակներուն գրուածքները անբաւ ստըկով կըգնեն տպագրապետներն ու գրածախները և կըտպեն . օրինակի համար , Շաթոսլրիան գաղղիացին իր բոլոր գրուածքները , 26 հատոր՝ տպած ու անտիպ , 1826ին ծախեց գրածախի մը 550,000 ֆրանքով . հարկաւ կիմացուի թէ ան գնող գրածախը մեծ վաստակ ընելու յուսով գնած է գրուածքները այնչափ ստըկի :

Պարձեալ , եւրոպացւոց ընթերցասիրութեանը մէկ մեծ նշանն ալ օրագիրներուն կամ լրագիրներուն շատութիւնն է , որ օրէ օր աւելնալու վրայ են : Ո՞իայն Լ օնտրա քաղաքը 1840ին՝ մէկ ամսուան մէջ 2,531,000 օրինակ օրագիր տպուեր է : Լս սոսկալի շատութեանը համեմատ է նաև ասոնց տպագրութեան արագութիւր : Խնդղիայի փառլամէնթին մէջ իրիկուան վեցին ատենը եղած խօսակցութիւնը՝ նոյն օրը 4 ժամէն ետև բոլոր Լ օնտրային մէջ կըկարդացուի : Պազդղիայի մէջ 3,500,000 հոգի կայ որ օրագիր կըկարդայ կըսեն . ասանկ հասկընալու է նաև գերմանացւոց , հոլանտացւոց , իտալացւոց և ուրիշազգերու վրայ : Ո՞ւր թողունք անթիւանհամար մեծ ու պղտիկ գրքատունները , վերծանութեան թանգարանները , և այլն , որ գրեթէ ամէն երեւելի քաղաքներու մէջ կան : Լոյսչափսբաւական պիտի ըլլայ՝ եւրոպացւոց ընթերցասիրութիւնը մեր ազգին ալ քիչ մը հասկըցնելու , և իբրև գեղեցիկ օրինակ մը առջեւը դնելու որ հետեւի :

Ո՞վ չգիտեր թէ մեր ազգը արեւելքի ազգերուն մէջ առաջին ընթերցասէր ազգերէն մէկը եղած է միշտ . ո՞վ չգիտեր թէ հիմայ ալ իր ընթերցասիրութելը գլխաւոր արգելք ընողն

է աղքատութիւն, խեղջութիւն, ուսումնասիրութեան միջոցներու պակասութիւն։ Եւ սակայն մեր պարտքն է յորդորել զամէնքը այնչափ ընթերցասէր ըլլալու, որ անով ինչուան աս արգելքներն ալ վերցուին կամ պակսին։ իսկ թէ իրաւցընէ ընթերցասիրութիւնն ու ուսումնասիրութիւնը մարդուս աղքատութիւնը և խեղջութիւնը կրպակսեցընեն, ամէն օրուան փորձերով ալ յայտնի է, և աղէկը ան է որ մեր ազգը իր վրայ ալ հիմա աւելի պայծառ կրտեսնէ աս ձշմարտութիւնը, և կարօտ չէ երկայն յորդորանքներու։ Իտեն մը կար որ գրել կարդալը միայն եկեղեցականներու պահուած արհեստ մը կրկարծուէր. բայց հիմա աս կարծիքը գրեթէ վերցուած է. վասն զի ամէն մարդ գիտէ որ գիտութիւնը որ և իցէ մարդու արդար ժառանգութիւնն է, և ամէն մարդ պարտական է կրցածին չափ իր բանականութիւնը ուսմամբ և գիտութեամբ կրթելու և օրէ օրէ կատարելագործելու։

### Իսրոյական առաջնէր :

ՅԱՏԱԿԸ չտեսած փոսիդ մէջ մի կոխեր, վասն զի խորութիւնը չես գիտեր. չճանցած մարդուդ հետ համարձակ մի վարուիր, վասն զի սրտին խորութիւնը չես գիտեր։

Ո՞ր և իցէ կենդանի կրնայ ճանչցուիլ մորթովը, ձեռվը, ու ցեղովը. միայն մարդուն աղէկութիւնը կամ գէշութիւնը իր առաքինութենէն ու մոլութենէն կրհասկցուի. ոչ մազերէն, ոչ հագուստէն և ոչ նախնիքներէն։

Իսրոյեման մարդը կըսուի, որ ամէն գործողութեան մէջ սկիզբն ու

վերջը՝ աջն ու ձախը առաջուց կըմուածէ. այսպիսին ինքիր վրայ ոչ աղէկ կըխօսի ոչ գէշ, վասն զի գիտէ որ ինքզինքը գովելը փառամոլութիէ, և ատենէ դուրս վար զարնելը անմտութիւն. խօսողին համար մեծ պակասութիւն, մտիկ ընողին ալ մեծ տանջանք։

Ո՞արդ կայ որ իրեն մանր պակասութիւնները ամէնուն առջեւը կըզուրցէ, որպէս զի հասկըցընէ թէ մեծ պակասութիւն չունի. ինքզինքը վար կըզարնէ՝ որպէս զի գովեստ լըսէ. սուտ խոնարհութեամբ իր փառասիրութիւնը կըսյատնէ, և անով ուրիշներուն վրայ տիրել կըջանայ։

Իսրոյեմմարդը ամէն բան վար ըրզարներ, չէ նէ՝ շատ չարասիրտ կըլլար. ամէն բանի ալ մէկէն չհաւնիր, չէ նէ շատ տղայամիտ ու ցած կըլլար։

Չատ մարդ կայ որ ուրիշներու աւելի աղէկ գիտէ խորհուրդ տալքան թէ իր անձին։

Ինկերութեն մէջ գտնուողին գործքերը ամէնուն աչքին առջեւն են. իսկ ան գործքերուն դատաւոր շատ անգամ տգէտները և նախանձուներն են. աս երկու տեսակ մարդիկն ալ ոչ արհամարհելու է, և ոչ խիստ մեծ բանի տեղ գնելու։

Ոչ կամ չէ մակրայը՝ լսողին շատ անգամ ծանր է, անոր համար ըսողին ալ ծանր պիտի ըլլայ. բայց երբեմն ոչը այրեն աղէկ է. Վեղմէ բան մը խնդրողին մէկէն ՚ի մէկ չէ մըսեր. ատ լեզի գեղը անուշութեամբ ու քաղաքավարութեամբ բարեխառնէ. շատ անգամ ասով խնդիրքը կատարածի չափ կըլլաս։

Դժմարտասէր ու բարեսէր մարդուն ականջը երկու դուռ ունի. առջի դունէն ընդունած լուրը կամ խօսքը երկրորդէն ներս չառներ՝ ինչուան աղէկ մը ցքննէ։